ԵԴ1/1244/01/23
(ՀԿԴ/0111/01/24)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 հուլիսի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Արթուր Պողոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1244/01/23 (ՀԿԴ/0111/01/24) քրեական վարույթի ընդդատության մասին վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունիսի 17-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի սեպտեմբերի 5-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Լիլիթ Սուքիասի Հակոբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 62266122 (ԵԴ1/1244/01/23) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 8-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1244/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի սեպտեմբերի 22-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հունիսի 7-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0111/01/24 (ԵԴ1/1244/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հունիսի 13-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ Լիլիթ Սուքիասի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել՝ հետևյալ արարքի համար. *«/Ն/ա հանդիսանալով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար, ապա տնօրեն, հանդիսանալով պաշտոնատար անձ և ի պաշտոնե լիազորված լինելով տնօրինել կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, ինչպես նաև պատասխանատվություն կրելով հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորել է անփույթ վերաբերմունք, մասնավորապես՝ առանց ստուգելու հաստատել է կազմակերպության հաշվապահի կողմից կազմված և իրականությանը չհամապատասխանող՝ կազմակերպության 2018 թվականի մայիսից սեպտեմբեր ամիսն ներառյալ ժամանակահատվածի, ինչպես նաև 2019 թվականի դեկտեմբեր ամսի ֆինանսական հաշվետվությունները, որի հետևանքով անզգուշությամբ էական վնաս է պատճառել կազմակերպության և պետության օրինական շահերին՝ այն է պետությանը պատճառվել է 3.256,390 ՀՀ դրամի, իսկ «Մարի Իզմիրլյանի անվան*

մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը 2.695.000 ՀՀ դրամի գույքին վնաս:

Այսպես՝ Լիլիթ Սուքիասի Հակոբյանը 2017 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 3-ը հանդիսանալով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար, իսկ 2019 թվականի մայիսի 22-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 29-ը հանդիսանալով նույն կազմակերպության տնօրենը և հանդիսանալով պետության կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության անունից հանդես գալու լիազորություն ունեցող պաշտոնատար անձ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարելով կազմակերպության գործունեությունը, նույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով լիազորված լինելով տնօրինել կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն կրելով հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար, նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ պարտավոր լինելով ապահովել ֆինանսական հաշվետվություններ պատրաստելն ու ներկայացնելը, 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով լիազորված լինելով գլխավոր հաշվապահի հետ միասին ստորագրել ֆինանսական հաշվետվությունները, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ 2018 թվականի մայիսից սեպտեմբեր ամիսն ներառյալ ժամանակահատվածում, ինչպես նաև 2019 թվականի դեկտեմբեր ամսին դրսևորել է անբարեխիղճ և անփույթ վերաբերմունք, մասնավորապես՝ հսկողություն չի իրականացրել հաշվապահ Հռիփսիմե Վիրաբյանի կողմից ՊՈԱԿ-ի «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում առկա 220305140414000 հաշվարկային հաշվից, առանց հիմքերի, կազմակերպության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չգտնվող «Հրայր» ՍՊ ընկերությանը գումար փոխանցելու գործառույթի նկատմամբ, իր ստորագրությամբ հաստատել է վերջինիս կողմից կազմված իրականությանը

չհամապատասխանող, կեղծ տեղեկություններ պարունակող «Մարի Իզմիրյանի անվան մանկապուն» ՊՈԱ կազմակերպության՝ պաշտոնական շրջանառության մեջ գտնվող, փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ վերը նշված ժամանակահատվածների հաշվետվությունները՝ դրանք ներկայացվելով լիազոր պետական մարմնին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ինչի արդյունքում պետությանը պատճառվել է 3.256.390 ՀՀ դրամի գույքային վնաս, իսկ «Մարի Իզմիրյանի անվան մանկապուն» ՊՈԱԿ-ին 2.695.000 ՀՀ դրամի գույքային վնաս (…)»[1]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, քննության առնելով հանրային մեղադրող Վ.Սարգսյանի՝ վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու վերաբերյալ միջնորդությունը, 2024 թվականի հունիսի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Մեջբերված հոդվածի տառացի մեկնաբանության արդյունքում կարելի է ողջամիտ հետևության հանգել, որ առաջին հայացքից, ձևական առումով, Լիլիթ Հակոբյանի վերաբերյալ թիվ 62266122 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, քանի որ մեղադրյալ Լ.Հակոբյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով, որը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկում:*

Մինչդեռ, բովանդակային առումով, դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթը պետք է քննվի ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, հետևյալ հիմնավորումներով.

Այսպես.

Մեղադրյալ Լիլիթ Հակոբյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից հետևում է, որ վերջինս օրենքով սահմանված կարգով հսկողություն չի իրականացրել հաշվապահ Հռիփսիմե

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 232-233:

Վիրաբյանի կողմից կատարած գործողությունների նկատմամբ, ում վերաբերյալ քրեական գործը գտնվում է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում (ՀԿԴ/0177/01/22):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մեկ վարույթում կարող են միացվել՝ միմյանց հետ փաստական հանգամանքներով կապված մեկից ավելի ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթները՝ պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով:

Դատարանը գտնում է, որ պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով, ելնելով արդարադատության շահից, մեղադրյալ Լիլիթ Հակոբյանի վերաբերյալ քրեական գործը պետք է միացվի մեղադրյալ Հռիփսիմե Վիրաբյանի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0177/01/22 քրեական վարույթին, քանի որ դրանք փաստական հանգամանքներով փոխկապված են մեկը մյուսի հետ և կազմում են մեկ ամբողջություն:

Հարկ է փաստել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը կարգավորում է նույն դատարանի մեկից ավելի դատավորների մոտ գտնվող վարույթները միացնելու հարցը, սակայն օրենսգրքով առկա չէ որևէ կարգավորում, թե ինչ ընթացակարգով են միացվում տարբեր դատարանների վարույթներում գտնվող քրեական գործերը: Դատարանի համոզմամբ նշված հարցը ենթակա է քննարկման առարկայական ընդդատության կանոններով, քանի որ փաստ է, որ Լիլիթ Հակոբյանի վերաբերյալ քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0177/01/22 քրեական գործի մաս է կազմում: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը քննում է հակակոռուպցիոն դատարանը: Վկայակոչված հոդվածի բովանդակությունից ակնհայտ է, որ սույն գործն ինքնին համարվում է կոռուպցիոն բնույթի և որևէ նշանակություն չի կարող ունենալ այն հանգամանքը, որ Լիլիթ Հակոբյանի վերաբերյալ քրեական գործի մասը դատարան է ստացվել թիվ ՀԿԴ/0177/01/22 քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարան մուտքագրվելուց

հետո: Հակառակ մոտեցումը, չի բխում վկայակոչված իրավանորմի պահանջից և խմաստազրկում է օրենսդրական նշված կանոնը:

Վերոնշյալից զատ, հարկ է փաստել նաև, որ թիվ ԵԴ1/1244/01/23 և ՀԿԴ/0177/01/22 քրեական գործերը իրարից անջատ քննվելու պարագայում չի բացառվում, որ ստեղծվի մի իրավիճակ, երբ նույն փաստական հանգամանքներով կկայացվեն իրար հակասող երկու եզրափակիչ դատական ակտ, ինչն էլ իր հերթին կհանգեցնի անորոշության:

Դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա» (տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Walchli v. France գործով 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ):

Ամփոփելով վերոնշյալը և հիմք ընդունելով այն, որ Լիլիթ Սուքիասի Հակոբյանի վերաբերյալ քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից քննվելու պարագայում իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա, գտնում եմ, որ թիվ ԵԴ1/1244/01/23 քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին (…)»[2]:

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հունիսի 17-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Հ]արկ է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածը ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը նախատեսող հավելված N 1-ում:*

Բացի այդ, հատկանշական է նաև այն, որ 15.01.2024 թվականին, վերը նշված քրեական գործի նախնական դատաքննությունների ընթացքում՝ ընդդատության վերաբերյալ հարցի քննարկման ժամանակ, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցները պնդել են, որ քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 41-43:

ապյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, այնուհետև, 2024 թվականի հունիսի 7-ին կայացած դատական նիստի ընթացքում, հանրային մեղադրողը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվում է մի քրեական վարույթ, որից անջատվել է սույն քրեական վարույթը, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրանքը քննում է հակակոռուպցիոն դատարանը, նաև այն, որ նշված քրեական վարույթները իրարից անջատ քննվելու հանգամանքը չի բխում արդարադատության շահից, միջնորդել է քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Միջնորդության դեմ մեղադրյալ Լիլիթ Հակոբյանի շահերի պաշտպան՝ Հ.Սարգսյանն առարկել է՝ այն պատճառաբանությամբ, որ կոնկրետ դեպքում առկա չէ արդարադատության շահ, քանի որ հակակոռուպցիոն դատարանում քննվող քրեական վարույթի առարկան թեև կարող է հետևանք լինել Լ.Հակոբյանի գործողություններին, սակայն հաշվի առնելով դրա ծավալը և վարույթի քննության տևողությունը, նպատակահարմար չէ նշված վարույթների միացումը, քանի որ այդ դեպքում կիսախտվի իր պաշտպանյալի իրավունքը իր վերաբերյալ գործը ողջամիտ ժամկետում քննելու առումով:

Դատարանը՝ հանրային մեղադրողի միջնորդությունը, մեղադրյալի պաշտպանի առարկության պայմաններում, բավարարել է և քրեական գործն առարկայական ընդդատությամբ ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Դատարանը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը չի նախատեսել ընդհանուր իրավասության դատարանում և մասնագիտացված դատարանում քննվող քրեական վարույթների միացման ընթացակարգ, ուստի Դատարանը չի կարող վարույթ ընդունել և քննել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ոչ ընդդատյա քրեական գործ՝ ելնելով միայն այն հանգամանքից, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի մեկ այլ դատավորի վարույթում քննվում է տվյալ վարույթին առնչվող այլ վարույթ: Ընդ որում, նույն դատարանի մեկից ավելի դատավորների մոտ գտնվող վարույթները միացնելու հարցը լուծում է դատարանի նախագահը, ոչ թե ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ոչ ընդդատյա քրեական գործը վարույթ ընդունած դատավորը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0111/01/24 (ԵԴ1/1244/01/23) քրեական վարույթը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0111/01/24 քրեական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար (...)»[3]:

7. 2022 թվականի դեկտեմբերի 26-ին Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել Հռիփսիմե Մաքսիմի Վիրաբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3–րդ մասի 3–րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ՀԿԴ/0177/01/22 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին[4]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1244/01/23 (ՀԿԴ/0111/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 54-59:

[4] Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ՀԿԴ/0177/01/22 քրեական վարույթը:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հատակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախաապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով*

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ մեղադրյալ Լ.Հակոբյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից հետևում է, որ վերջինս օրենքով սահմանված կարգով հսկողություն չի իրականացրել հաշվապահ Հռիփսիմե Վիրաբյանի կողմից կատարած գործողությունների նկատմամբ, ում վերաբերյալ քրեական գործը գտնվում է Հակակոռուպցիոն դատարանում, գտել է, որ պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով, ելնելով արդարադատության շահից, մեղադրյալ Լ.Հակոբյանի վերաբերյալ քրեական վարույթը պետք է միացվի մեղադրյալ Հռիփսիմե Վիրաբյանի

վերաբերյալ Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0177/01/22 քրեական վարույթին, քանի որ դրանք փաստական հանգամանքներով փոխկապված են մեկը մյուսի հետ և կազմում են մեկ ամբողջություն[8]:

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ Լ.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված ենթադրյալ հանցանքը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի, գտել է, որ թիվ ՀԿԴ/0111/01/24 (ԵԴ1/1244/01/23) քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[9]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Լ.Հակոբյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից հետևում է, որ վերջինս ենթադրաբար հսկողություն չի իրականացրել հաշվապահ Հռիփսիմե Վիրաբյանի գործողությունների նկատմամբ, իր ստորագրությամբ հաստատել է վերջինիս կողմից կազմված՝ իրականությանը չհամապատասխանող, կեղծ տեղեկություններ պարունակող հաշվետվությունները՝ դրանք ներկայացնելով լիազոր պետական մարմնին, ինչի արդյունքում պետությանը և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին պատճառվել է գույքային վնաս: Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Լ.Հակոբյանին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքներով անմիջականորեն կապված է Հռիփսիմե Մաքսիմի Վիրաբյանի վերաբերյալ Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0177/01/22 քրեական վարույթի հետ:

Նման պայմաններում ընդունելի են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունները, որ թիվ ՀԿԴ/0111/01/24 (ԵԴ1/1244/01/23) և ՀԿԴ/0177/01/22 քրեական վարույթներն իրարից անջատ քննվելու պարագայում չի բացառվում, որ նույն փաստական հանգամանքներով կարող են կայացվել երկու՝ իրար հակասող եզրափակիչ դատական ակտեր, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել անորոշության, վտանգել օրենքի առջև հավասարության սկզբունքը, ինչպես նաև իր ազդեցությունն ունենալ

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

դատավարության արդարացիության՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննության վրա: Հետևաբար, գտնում ենք, որ առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հիմքը:

15. Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1244/01/23 (ՀԿԴ/0111/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

16. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև, ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման անհրաժեշտությունից՝ գտնում ենք, որ թիվ ԵԴ1/1244/01/23 (ՀԿԴ/0111/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Լիլիթ Սուքիասի Հակոբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԵԴ1/1244/01/23 (ՀԿԴ/0111/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ